Իրանը Չինաստանից պահանջում է ճանաչել կղզիների նկատմամբ իր ինքնիշխանությունը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 11.06.2024 թ.

06.02.2024 թ. Իրանի ԱԳՆ-ն կանչել է Թեհրանում Չինաստանի դեսպանին և բողոք ներկայացրել՝ Պարսից ծոցում երեք կղզիների կարգավիճակի վերաբերյալ Պեկինի դիրքորոշման պատճառով, որոնք Իրանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև երկարատև տարածքային վեճի առարկա են:

Խոսքը ռազմավարական նշանակություն ունեցող Մեծ Թունբ, Փոքր Թունբ և Աբու Մուսա կղզիների մասին է, որոնք Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան ժառանգության ապագաղութացման արդյունքում դարձան արաբական միապետության և Իրանի միջև վիճարկման թեմա:

Իրանի ԱԳՆ-ի բողոքը կապված է Էմիրաթ-չինական համատեղ հայտարարության հետ, որը հրապարակվել է ԱՄԷ-ի նախագահ Շեյխ Մուհամմեդ բին Զայեդ Ալ Նահյանի Պեկին կատարած այցից հետո: Փաստաթղթում ասվում է, որ Չինաստանը *«աջակցություն է հայտնել ԱՄԷ-ի ջանքերին՝ միջազգային իրավունքին համապատասխան երկկողմ բանակցությունների միջոցով երեք կղզիների՝ Մեծ Թունբ, Փոքր Թունբ և Աբու Մուսա կղզիների խնդրի խաղաղ լուծմանը հասնելու համար»:* Իրանական կողմը կարծում էր, որ դրանով Պեկինը կասկածի տակ է դնում Իրանի տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը կղզիների նկատմամբ, որոնք ԱՄԷ-ն համարում է Թեհրանի կողմից անօրինական կերպով բռնազավթված:

Սա առաջին դեպքը չէ, երբ Թեհրանը Պեկինին բողոք է ներկայացնում Ծոցի նշված կղզիների խնդրով: Վերջին անգամ Իրանի ԱԳՆ-ն Չինաստանի դեսպանին բողոքի նոտա էր հանձնել 2022 թ. դեկտեմբերին, երբ Չինաստանի նախագահ Սի Ցզինպինը նմանօրինակ հայտարարություն էր ստորագրել Սաուդյան Արաբիայում կայացած Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի և Չինաստանի գագաթնաժողովից հետո:

Հատկանշական է, որ առնվազն երկու անգամ Իրանը բողոքի նոտա է հղել նաև Ռուսաստանին՝ կղզիներում ԱՄԷ-ի դիրքորոշմանը վերջինիս համերաշխության հետ կապված: 2023 թ. հուլիսին ռուսական կողմը Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի և Ռուսաստանի Դաշնության գագաթնաժողովում ստորագրել է վերոնշյալի նման փաստաթուղթ, որից հետո Թեհրանում ՌԴ դեսպան Ալեքսեյ Դեդովին հանձնվել է բողոքի նոտա: Այնուհետև 2023 թ. դեկտեմբերին Իրանի բողոքն արտահայտվեց Իրանում ՌԴ գործերի ժամանակավոր հավատարմատարին, այն բանից հետո, երբ Մարոկկոյում կայացած ռուս-արաբական համաժողովի 6-րդ նիստի շրջանակներում Մոսկվան վերահաստատեց իր համաձայնությունը՝ կղզիների

կարգավիճակի շուրջ խնդրի լուծման խաղաղ գործընթացին: Նշված բոլոր դեպքերում, դեսպաններին կանչելով ԱԳՆ՝ Իրանը չինական և ռուսական կողմերից պահանջել է ճանաչել *«Իրանի հավերժական և անփոփոխ ինքնիշխանությունը կղզիների նկատմամբ»*:

Այդպիսով, Մոսկվայի և Պեկինի համար այս հարցում ձևավորվում է փակուղային իրավիճակ: Մի կողմից, ԱՄԷ-ն և Պարսից ծոցի արաբական երկրները ՉԺՀ-ի և ՌԴ հետ ցանկացած քաղաքական և տնտեսական համագործակցության համար անփոխարինելի պայման են դարձնում, որպեսզի վերջիններս ճանաչեն կղզիների վիճելի կարգավիճակը: Մինչդեռ Իրանն իր հերթին պահանջում է կղզիների նկատմամբ իր ինքնիշխանության անվերապահ ճանաչում: Նման պայմաններում ո՛չ Չինաստանը, ո՛չ էլ Ռուսաստանը չեն կարող հույս դնել Պարսից ծոցի առանցքային տարածաշրջանն իրենց աշխարհառազմավարական ծրագրերում ամբողջությամբ ներառելու վրա: Ո՛չ կողմերի դիրքորոշումներից համաչափ հեռավորությունը, ո՛չ, հատկապես, նրանցից որևէ մեկին աջակցելու փորձը չի նպաստում բարենպաստ միջավայրի ստեղծմանը տարածաշրջանի հարուստ էներգետիկ ռեսուրսների և դրա նյութատեխնիկական նշանակության հետ կապված նրանց հավակնոտ ծրագրերի լիարժեք իրականացման համար: Քանի դեռ անհամաձայնություն կա Պարսից ծոցը Հնդկական օվկիանոսի հետ կապող Հորմուզի նեղուցի մատույցներում գտնվող կղզիների կարգավիճակի շուրջ, տարածաշրջանը միշտ կլինի փաստացի մշտական առճակատման պայմաններում:

Ինչպես ցույց են տալիս Պեկինի և Մոսկվայի ռեվերանսները մեկ և մյուս ուղղություններով (բողոքի յուրաքանչյուր նոտայից հետո ՉԺՀ-ն և ՌԴ-ն պետք է հավաստիացնեին Իրանին՝ իր տարածքային ամբողջականության ճանաչումը), Պեկինը և Մոսկվան դեռևս չեն գտել կղզիների խնդրի նկատմամբ հավասարակշռված և վերջնական կեցվածքի բանաձև: Եվ սա ևս մեկ անգամ հաստատում է բրիտանական քաղաքականության արդյունավետությունը, որը կարողացավ ամենուր, որտեղ նախկինում ծածանվել էր գաղութատիրական կայսրության դրոշը՝ Union Jack-ը, թողնել խնդիրներ, որոնց համար չկան կարգավորման համապիտանի բանալիներ: